ՀՈՂԻ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐԿԵՐ

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ՄԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՄԱԿԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ցանկացած երկրի տնտեսական ներուժը պայմանավորված է անհրաժեշտ ռեսուրսների առկայությամբ: Դրանց շարքում առանձնահատուկ նշանակություն ունի հողը՝ որպես բնության պարգև: Հայտնի է, որ 1 սմ հաստությամբ հողի շերտը բնական պայմաններում կարող է ձևավորվել շուրջ 200 տարվա ընթացքում: Թերևս այս հանգամանքը, ինչպես նաև հողից ստացված արդյունքների (ինչպես ընդերքից, այնպես էլ պտղաբերումից) նկատմամբ պահանջարկի աճը թելադրում են յուրաքանչյուր երկու տասնամյակի ընթացքում հողի գնի կրկնապատկում: Այդ գործընթացի վրա զգալի ազդեցություն է թողնում նաև բնակավայրերի, հատկապես խոշոր քաղաքների մեծացումը և արդյունաբերական ձեռնարկությունների ու ենթակառուցվածքների ծավալումը, որոնք ավելի ու ավելի մեծ քանակությամբ հողային զանգվածներ են կլանում: Այդ պարագայում անտնտեսավար հողօգտագործումը հանգեցնում է ոչ միայն այսրոպեական, այլև անդառնալի կորուստների: Ասվածն ավելի քան արդիական է փոքր հողային ֆոնդ ունեցող այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է:

Հողի՝ որպես կապիտալի նկատմամբ բնակչության կարծիքի բացահայտման և դրա արժեքավորման ճիշտ գնահատականի ստացման եղանակներից մեկը ազգաբնակչության շրջանում անցկացվող սոցիոլոգիական հետազոտություններն են: Ուստի սույն ուսումնասիրության հիմնական նպատակն է պարզել գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման վերաբերյալ ՀՀ քաղաքացիների կարծիքներն ու նախապատվությունները, նրանց կողմից այդ հողերի օգտագործման ձևերի ընտրությունը:

Սոցիոլոգիական հարցումները կատարվել են 2011-ի մարտ-հունիս ամիսներին՝ Երևանում և Գյումրիում: Ճշտվել է բուհերի ուսանողների (Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան (ԵՃՇՊՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ), ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ) տարբեր մասնագիտությունների (տեսական տնտեսագիտություն, ապահովագրական գործ), ինչպես նաև գիտաշխատողների, դասախոսների, պետական կառավարչական մի շարք հիմնարկների՝ ՀՀ ֆինանսների

նախարարության, ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակիցների, Շիրակի մարզի Արթիկի և Անիի տարածաշրջանների գյուղաբնակների կարծիքը հողօգտագործման վերաբերյալ:

Ուսումնասիրությունն իրականացվել է հասարակության տարբեր խավերի շրջանում՝ ընդգրկելով չափահաս բնակչության գրեթե բոլոր (17-25, 26-40, 41 և ավելի) տարիքային խմբերը:

Հարցաթերթիկի միակ հարցը հետևյալն է. «Եթե Դուք գյուղատնտեսական նշանակության հող ունենայիք, ինչպե՞ս կվարվեիք դրա հետ», որն ունի չորս ենթադրյալ պատասխան՝

- ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի,
- վարձակալության կհանձնեի,
- ոչինչ չէի անի,
- կվաճառեի:

Հարցման ընթացքում բաժանվել է 490 հարցաթերթիկ, որոնք պատասխանվել և վերադարձվել են ամբողջապես:

Հետազոտության տվյալների վերամշակման հիմնական փուլերն են եղել՝

- տվյալների մուտքագրում. նախնական տվյալները մուտքագրվել են հատուկ կազմված աղյուսակների մեջ (յուրաքանչյուր խմբի և պատասխանի համար առանձին աղյուսակ),
- տվյալների վերստուգում. իրականացվել է մի քանի փուլով՝

1. լրացված հարցաթերթիկների առարկայական վերստուգում,
2. տվյալների թվաբանական և տրամաբանական վերստուգում,
3. ցուցանիշների հաշվարկման արդյունքների վերստուգում, տվյալների զտում՝ վերստուգման արդյունքում բացահայտված սխալների և անհամապատասխանությունների վերացում:

Հարցման մասնակիցների մեջ զգալի մաս է կազմում երիտասարդությունը (ուսանող), այսինքն՝ 17-25 տարիքային խումբը: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ այսօրվա երիտասարդները մեր երկրի ապագան են և նրանց կարծիքի հիման վրա են ձևավորվելու ապագա մոտեցումները, հետևաբար նաև վարվող տնտեսական քաղաքականությունը: Այսպես՝ 17-25 տարիքային խումբը կազմել է հարցվածների 70.3%-ը, 14.2%-ը՝ 26-40 տարիքային խումբը և 15.5%-ը՝ 41 և ավելի տարեկան անձանց խումբը:

Ընդհանուր հարցման համախմբի մեջ տարիքային խմբերի տեսակարար կշիռների մասին պատկերացում է տալիս գծապատկեր 1-ը.

Գծապատկեր 1

Տարիքային խմբերի տեսակարար կշիռները հարցման համախմբում



Հարցման ենթարկվածների զգալի մասը՝ 266-ը կամ ամբողջի 54.3%-ը, իգական սեռի ներկայացուցիչներ են: Տարիքային խմբերի պատկերը, ըստ հարցվածների սեռի, ներկայացնենք գծապատկերի օգնությամբ.

Գծապատկեր 2

Տարիքային խմբերի տեսակարար կշիռներն ըստ հարցվածների սեռի (%)



Աղյուսակ 1-ում ամփոփված է հարցման մասնակիցների բաշխվածությունը՝ ըստ կազմակերպությունների:

Աղյուսակ 1

Հարցման մասնակիցների բաշխումն ըստ կազմակերպությունների և մասնակիցների խմբերի

Հարցվածների խումբը	Հարցված-ների թիվը	%-ը՝ ընդհանուր հարցված-ների մեջ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցներ(ՖՆ)	20	4.1
ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատա-կիցներ (ՋՏ)	20	4.1
ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակիցներ (ՊԳԿՎ)	31	6.3
Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)	87	17.7
Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան (ԵՃՇՊՀ)	21	4.3
Տնտեսագիտության դոկտորներ (ՏԴ)	13	2.7
Հայաստանի պետական տնտեսագիտական համալ-սարանի (ՀՊՏՀ-Երևան) ուսանողներ և դասախոսներ	141	28.8
Հայաստանի պետական տնտեսագիտական համալ-սարանի Գյումրու մասնաճյուղի (ՀՊՏՀ-Գյումրի) ուսանողներ և դասախոսներ	97	19.8
Շիրակի մարզի Արթիկի և Անիի տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներ (ԳՏ)	60	12.2
Ընդամենը	**490**	**100**

Պետք է նշել, որ լավագույնս ապահովվել է հարցման ենթարկվածների կարծիքների ինքնուրույնությունը, այսինքն՝ հարցաթերթիկի և այն լրացնողի միջև միջնորդ չի եղել:

Կարևոր է ընդգծել նաև, որ թեև հարցումն իրականացվել է հիմնականում Երևանում և Գյումրիում, սակայն հարցման ներկայացուցչականությունն ավելի լայն է, քանի որ մասնակիցների մեծ մասը, լինելով ուսանող, ներկայացնում է Հայաստանի այլ մարզերի, ինչպես նաև գյուղական բնակչությունը:

Երևանում և Շիրակի մարզում (ներառյալ՝ Գյումրիում) հարցման մասնակիցների պատասխանների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Առաջադրված հարցին պատասխանած ՀՀ քաղաքացիների մեծ մասը (55.5%) նշել է «Վարձակալության կիանձնեի» տարբերակը (272 պատասխան): Ըստ որում, այս խմբի մեջ գերակշռել են իգական սեռի ներկայացուցիչները (160): Հետաքրքիր է նշել, որ արական սեռի ներկայացուցիչների (224) պատասխանների ճիշտ կեսը (112) բաժին է ընկել «Վարձակալության կիանձնեի» տարբերակին, 90-ը (կամ արական սեռի ներկայացուցիչների թվաքանակի 40.2%-ը) պատասխանել են՝ «Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի», 9-ը (կամ 4.0%-ը)՝ «Ոչինչ չէի անի», իսկ 13-ը (կամ 5.8%-ը)՝ «Կվաճառեի»: Հարցվածների 34.5%-ը նախընտրել է

«Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի» տարբերակը (այս խմբում գերակշռել է արական սեռի ներկայացուցիչների պատասխանը՝ 90 մարդ, իգական սեռի 79-ի դիմաց), երկրորդ տեղում է «Կվաճառեի» պատասխանը՝ 6.9% (այս խմբում գերակշռել է իգական սեռի ներկայացուցիչների պատասխանը՝ 21 մարդ, արական՝ 13): Վերջին՝ չորրորդ տեղում է «Ոչինչ չէի անի» պատասխանը՝ 3.1% (այս խմբում գերակշռել է արական սեռի ներկայացուցիչների պատասխանը՝ 9 մարդ, իգական՝ 6):

Աղյուսակ 2

Երևանում և Շիրակի մարզում հարցվածների պատասխաններն ըստ տարիքային խմբերի և սեռերի

Հարցման պատասխանները	17-25 տարեկան			26-40 տարեկան			41 և ավելի տարեկան			Ընդամենը		
	իգ.	ար.	ամբողջը	իգ.	ար.	ամբողջը	իգ.	ար.	ամբողջը	իգ.	ար.	ամբողջը
Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի	53	54	107	14	18	32	12	18	30	79	90	169
%	26.4	37.8	31.1	41.2	50.0	45.7	38.7	40.0	39.5	29.7	40.2	34.5
Վարձակալության կհանձնեի	133	78	211	15	16	31	12	18	30	160	112	272
%	66.2	54.5	61.3	44.1	44.4	44.3	38.7	40.0	39.5	60.2	50.0	55.5
Ոչինչ չէի անի	3	7	10	2	1	3	1	1	2	6	9	15
%	1.5	4.9	2.9	5.9	2.8	4.3	3.2	2.2	2.6	2.3	4.0	3.1
Կվաճառեի	12	4	16	3	1	4	6	8	14	21	13	34
%	6.0	2.8	4.7	8.8	2.8	5.7	19.4	17.8	18.4	7.9	5.8	6.9
Ընդամենը	**201**	**143**	**344**	**34**	**36**	**70**	**31**	**45**	**76**	**266**	**224**	**490**
%	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**

Մեր կարծիքով՝ հատկապես ուշադրության է արժանի հարցման տիրույթում ներառված երկու խումբ մասնագետների՝ 1) Շիրակի մարզի Արթիկի ու Անիի տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների և 2) տնտեսագիտության դոկտորների մոտեցումը: Առաջինը հողի հետ անմիջական առնչություն ունեցող՝ դրա օգտագործման առավելություններն ու թերությունները, բարիքներն ու կորուստները լավ պատկերացնող անձանց խումբն է, իսկ երկրորդը տվյալ հարցի վերաբերյալ Հայաստանի մտավոր ներուժը ներկայացնող լավագույն մասնագետների խումբն է:

Այսպես՝ հարցված 60 գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների պատասխանների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում, իսկ հարցված 13 տնտեսագիտության դոկտորներինը՝ աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 3

Արթիկի ու Անիի տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների պատասխաններն ըստ տարիքային խմբերի և սեռերի

Հարցման պատասխանները	17-25 տարեկան			26-40 տարեկան			41 և ավելի տարեկան			Ընդամենը		
	իգ.	ար.	ամբողջը	իգ.	ար.	ամբողջը	իգ.	ար.	ամբողջը	իգ.	ար.	ամբողջը
Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի	0	4	4	1	10	11	7	15	22	8	29	37
%	0	57.1	40.0	20	83.3	64.7	50.0	78.9	66.7	36.4	76.3	61.7
Վարձակալության կհանձնեի	3	2	5	3	2	5	4	2	6	10	6	16
%	100	28.6	50.0	60	16.7	29.4	28.6	10.5	18.2	45.5	15.8	26.7
Ոչինչ չէի անի	0	0	0	1	0	1	0	1	1	1	1	2
%	0	0	0.0	20	0	5.9	0	5.3	3.0	4.5	2.6	3.3
Կվաճառեի	0	1	1	0	0	0	3	1	4	3	2	5
%	0	14.3	10.0	0	0	0.0	21.4	5.3	12.1	13.6	5.3	8.3
Ընդամենը	**3**	**7**	**10**	**5**	**12**	**17**	**14**	**19**	**33**	**22**	**38**	**60**
%	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**

Աղյուսակ 4

Տնտեսագիտության դոկտորների պատասխաններն ըստ տարիքային խմբերի և սեռերի

Հարցման պատասխանները	17-25 տարեկան			26-40 տարեկան			41 և ավելի տարեկան			Ընդամենը		
	Իգ.	Ար.	Ամբողջը	Իգ.	Ար.	Ամբողջը	Իգ.	Ար.	Ամբողջը	Իգ.	Ար.	Ամբողջը
Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի	-	-	-	-	-	-	1	2	3	1	2	3
%	-	-	-	-	-	-	33.3	20.0	23.1	33.3	20.0	23.1
Վարձակալությա ն կհանձնեի	-	-	-	-	-	-	2	6	8	2	6	8
%	-	-	-	-	-	-	66.7	60.0	61.5	66.7	60.0	61.5
Ոչինչ չէի անի	-	-	-	-	-	-	0	0	0	0	0	0
%	-	-	-	-	-	-	0	0	0.0	0	0	0.0
Կվաճառեի	-	-	-	-	-	-	0	2	2	0	2	2
%	-	-	-	-	-	-	0	20.0	15.4	0	20.0	15.4
Ընդամենը	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**3**	**10**	**13**	**3**	**10**	**13**
%	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**

Հարցման մասնակիցների նշված պատասխանների տարբերություններն ակնառու դարձնելու նպատակով կազմենք աղյուսակ 5-ը, ըստ որի կարելի է նշել.

• հարցաթերթի առաջին պատասխանն ամենաշատը (61.7%) նշվել է Շիրակի մարզի Արթիկի և Անիի գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների, ամենաքիչը (23.1%)՝ տնտեսագիտության դոկտորների կողմից,

• Շիրակի մարզում, Երևանի համեմատությամբ, 9.3 տոկոսային կետով շատ են առաջին պատասխանի կողմնակիցները,

• հողը վարձակալության հանձնելու կողմնակիցների ամենաբարձր ցուցանիշը (61.5%) գրանցվել է տնտեսագիտության դոկտորների շրջանում, ինչը կապված է այս խմբի բարձր միջին տարիքային առանձնահատկության հետ, իսկ ամենացածրը վերաբերում է Շիրակի մարզի Մանթաշի ու Անիի գյուղացիական տնտեսություններին (26.7%), որը Շիրակի մարզի միջին ցուցանիշից ցածր է 20.4 տոկոսային կետով,

• «Ոչինչ չէի անի» պատասխանի ամենամեծ թվով կողմնակիցները Շիրակի մարզում են (5.1%), իսկ ամենափոքր թիվն արձանագրվել է տնտեսագիտության դոկտորների խմբում (0.0%),

• «Կվաճառեի» պատասխանի ամենաշատ կողմնակիցները (15.4%) տնտեսագիտության դոկտորների խմբում են, իսկ ամենաքիչը (6.9%)՝ Երևանում:

Աղյուսակ 5

Հարցման մասնակիցների բաշխումն ըստ պատասխանների

Հարցման պատասխանները	Երևան	Շիրակի մարզ	Երևան և Շիրակի մարզ	Մանթաշի և Անիի գյուղացիական տնտեսություններ	Տնտեսագիտության դոկտորներ
Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի	105	64	169	37	3
%	31.5	40.8	34.5	61.7	23.1
Վարձակալության կհանձնեի	198	74	272	16	8
%	59.5	47.1	55.5	26.7	61.5
Ոչինչ չէի անի	7	8	15	2	0
%	2.1	5.1	3.1	3.3	0.0
Կվաճառեի	23	11	34	5	2
%	6.9	7.0	6.9	8.3	15.4
Ընդամենը	**333**	**157**	**490**	**60**	**13**
%	**100**	**100**	**100**	**100**	**100**

Համեմատություն Ռուսաստանի Դաշնության հետ

«Արգումենտի ի ֆակտի» (“Аргументы и факты”) շաբաթաթերթը, որն աշխարհում ամենամեծ տպաքանակ ունեցող տպագիր մարմինն է (շուրջ 23 մլն՝1980-ական թվականների սկզբին և շուրջ 8 մլն՝ 2010-ին. ներառված է նաև Գինեսի ռեկորդների գրքում), Ռուսաստանի Դաշնությունում իր

ընթերցողների շրջանում հարցում է կատարել և ստացվել է նույն հարցի 1098 պատասխան: Պատկերը հետևյալն է.

- ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի՝ 51% (561 ձայն),
- վարձակալության կհանձնեի՝ 29% (321 ձայն),
- ոչինչ չէի անի՝ 11% (120 ձայն),
- կվաճառեի՝ 9% (96 ձայն):

3-րդ և 4-րդ գծապատկերներում ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում անցկացված հարցման արդյունքների համեմատությունը:

Գծապատկեր 3

Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում անցկացված հարցման արդյունքների համեմատությունը (%)



Գծապատկեր 4

ՌԴ-ում և ՀՀ-ում հարցին տրված պատասխանների կառուցվածքը (դրանց արժեքների ընդհանուր մեծությունը կազմել է 100%)



ա) Ռուսաստանի Դաշնություն բ) Հայաստանի Հանրապետություն

Ըստ այդմ՝

• Եթե ՌԴ-ում հարցման մասնակիցների մեծ մասը (51%) տվել է «Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի» պատասխանը, ապա ՀՀ-ում այդ կարծիքին է հարցվածների 34.5%-ը (որը երկրորդ տարածված պատասխանն է): Ինչպես տեսնում ենք, ՌԴ-ում առաջին տարբերակի կողմնակիցները 16.5 տոկոսային կետով գերազանցում են ՀՀ իրենց «համախոհներին», ինչը զգալի տարբերություն է: Զարմանալին այն է, որ եթե ՀՀ-ում գործում է հողի մասնավոր սեփականության ինստիտուտը, ապա նույնը չի կարելի ասել ՌԴ-ի մասին, և այդ պայմաններում ՀՀ քաղաքացիներն, ունենալով նման առավելություն, գերադասում են ոչ թե սեփական ուժերով հող մշակելն ու դրանից եկամուտ ստանալը, այլ դրա օգտագործումն այլ ձևերով:

• Եթե ՌԴ-ում նշված տարբերակների շարքում երկրորդ տեղը զբաղեցնում է «Վարձակալության կհանձնեի» պատասխանը (29%), ապա ՀՀ-ում դրա կողմնակիցները զբաղեցնում են առաջին տեղը (55.5%). այս ցուցանիշը (26.5 տոկոսային կետով կամ 91.4%-ով ավելին է, քան ՌԴ համապատասխան ցուցանիշը, ինչը զարմանալի է, քանի որ դեռևս 1990-ական թվականների հողային բարեփոխումների հիմնական ուղղվածությունը մասնավոր սեփականության ինստիտուտի կայացումն էր, հողը որպես կարևոր արտադրության միջոց տնտեսական շրջանառության մեջ դնելն ու հողի բերքատվության (օգտագործման արդյունավետության) ավելացումը: Մինչդեռ, հասարակական գիտակցության մեջ չի ամրագրվել սեփականատիրոջ այս պատկերացումը, այլ գերակայում է հողի նկատմամբ սեփականության իրավունքն իրենից «հեռացնելու» և դրա միջոցով «կուպոններ խուզելու» ցանկությունը: Ցածր բերքատվության և բնակլիմայական բարդ պայմաններում վարվող գյուղատնտեսության պարագայում հողը վարձակալության հանձնելը ոչ միայն բարձրացնում է գյուղատնտեսական մթերքների գների մակարդակը (վարձակալության վճարի չափով), այլ նաև կարող է հանգեցնել վարձակալների կողմից գյուղատնտեսական նշանակության հողերի անխնա օգտագործման, հողի որակի և բերրիության արագ վատթարացման, քանի որ հողի վարձակալը ցանկանում է կարճ ժամանակահատվածում ստանալ առավելագույն արդյունք՝ չմտածելով ագրոմշակության կանոնների պահպանման մասին: Վերոգրյալի տեսանկյունից ՀՀ-ում հողը վարձակալության հանձնելու ցանկություն ունեցողների նման բարձր տոկոսաչափը պետք է համարել 1990-ական թվականներին սկըսված՝ հողին առնչվող բարեփոխումներից նահանջի արտահայտություն, որը չի կարող դիտարկվել որպես դրական երևույթ: Այս հանգամանքը կարող է որոշակի լույս սփռել այն փաստի վրա, թե ինչու գյուղատնտեսական նշանակության հողերի (այդ թվում՝ վարելահողերի) զգալի մասը (ընդհուպ մինչև 35-40%-ը) հանրապետությունում չի օգտագործվում: Թերևս գյուղատնտեսական հիմնական միջոցի՝ հողի մշակման և դրա հետ կապված հարաբերություններն այնքան են դժվարացել ու բարդացել (թանկ վառելանյութ և գյուղատնտեսական տեխնիկայի ծառայություններ, կարկտահարություններ, ստացված բերքի իրացման դժվարություններ և այլն), որ հողի մշակին «խրտնեցնում են» հողից:

• ՀՀ-ում «Ոչինչ չէի անի» տարբերակի կողմնակիցների թիվն ավելի քան 3.5 անգամ պակաս է ՌԴ-ում նույն տարբերակի կողմնակիցների թվից: Եթե ՌԴ-ում նշված պատասխանի կողմնակիցները հարցման ենթարկվածների 11% են կազմել, ապա մեր երկրում՝ ընդամենը 3.1%-ը: Այս հանգամանքը, հավանաբար, կարելի է բացատրել ռուսների համեմատությամբ հայերի՝ փոփոխությունների ավելի շատ հակված լինելով կամ էլ ՌԴ-ում, ՀՀ-ի համեմատությամբ, հողային բարեփոխումների ոլորտի ավելի բարվոք վիճակով:

• Եթե ՌԴ-ում հարցման պատասխանների առաջին երեք տարբերակների կողմ է հարցվածների 91%-ը, ապա ՀՀ-ում («Վարձակալության կհանձնեի», «Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի» և «Կվաճառեի» հերթականությամբ)՝ 96.9%-ը (գծապատկեր 5):

Գծապատկեր 5

Հարցման պատասխանի՝ առաջին երեք տեղերը զբաղեցրած տարբերակները ՌԴ-ում և ՀՀ-ում (դրանց արժեքների ընդհանուր մեծությունը ընդունվել է 100%)



ա) Ռուսաստանի Դաշնություն բ) Հայաստանի Հանրապետություն

Այսպիսով՝ ՌԴ-ում, ՀՀ համեմատությամբ, ավելի մեծ թիվ են կազմում առաջին, երկրորդ և երրորդ տարբերակների կողմնակիցները, իսկ ՀՀ-ում՝ երկրորդ, առաջին և չորրորդ տարբերակներն ընտրողները:

Պատկերն առավել ակնառու դարձնելու նպատակով ներկայացնենք առաջադրված հարցին տրված պատասխանների տարբերակների միջև եղած տարբերությունները ՀՀ-ում և ՌԴ-ում.

Աղյուսակ 6

Հարցման մասնակիցների պատասխանների ընդհանուր պատկերը ՌԴ-ում և ՀՀ-ում (զբաղեցրած տեղը և %-ը)

Երկիր	Պատասխաններ			
	Ինքս կմշակեի և դրանից եկամուտ կստանայի	Վարձակալության կհանձնեի	Ոչինչ չէի անի	Կվաճառեի
Ռուսաստանի Դաշնություն	1 (51%)	2 (29%)	3 (11%)	4 (9%)
Հայաստանի Հանրապետություն	2 (34.5%)	1 (55.5%)	4 (3.1%)	3 (6.9%)

Ֆ. Հայեկն իր հիմնարար աշխատություններից մեկում գրում է. «Որքան ավելի ուսյալ և քաղաքակիրթ են մարդիկ, այնքան բազմազան են նրանց հայացքներն ու նախասիրությունները, այնքան ավելի դժվար է միասնական մոտեցում սպասել ցանկացած արժեքային համակարգի վերաբերյալ: Հետևաբար՝ եթե ակնկալում ենք հայացքների միասնականություն, ապա դա պետք է փնտրել հասարակության այն շերտերում, որոնց բնորոշ են բարոյական և մտավոր ցածր մակարդակ, հասարակ, կոպիտ ճաշակ և բնազդներ: Ասվածը չի նշանակում, թե մարդկանց մեծամասնությունը զերծ է բարոյականությունից, ուղղակի միատարր արժեքային համակարգ ունեցող ամենամեծ խումբը կազմում են այն մարդիկ, որոնց բարոյական մակարդակը բարձր չէ: Այդպիսի մարդկանց միավորում է ամենափոքր «ընդհանուր բարոյական հայտարարը»: Եվ եթե մեզ անհրաժեշտ է հնարավորին չափ մեծաքանակ և բավականաչափ ուժեղ մարդկանց խումբ, որը կկարողանա այլոց պարտադրել սեփական հայացքներն ու արժեքները, ապա մենք երբեք չենք դիմի զարգացած աշխարհայացք և նախասիրություններ ունեցող մարդկանց: Մենք առաջին հերթին կգնանք ամբոխի՝ այն մարդկանց մոտ, ովքեր յուրօրինակ և ինքնուրույն չեն, ովքեր կարող են ցանկացած գաղափարախոսական ճնշում ապահովել պարզապես իրենց քանակով»:

Եզրահանգումներ և առաջարկություններ

ՀՀ գյուղատնտեսության հողօգտագործման վիճակը և ձևավորվող միտումները, մեղմ ասած, մտահոգիչ են: Պարենային անվտանգության արտաքին և ներքին ոչ դրվագային սպառնալիքների առկայությունը, պարենամթերքի ներմուծման թույլատրելի շեմից մեծ կախվածությունը, սակավահողության պայմաններում վարելի հողերի մոտ 40 տոկոսի ոչ նպատակային և ցածր արդյունավետությամբ օգտագործումը հրատապ են դարձնում նշված խնդիրների լուծմանը նպաստող պետական աջակցությունը: Մեր կատարած սոցիոլոգիական ուսումնասիրությունը բացահայտում է, որ տնտեսապես ակտիվ բնակչությունը օտարվում է հողից և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու շահագրգիռ ցանկություն չի դրսևորում:

Հանրահայտ է, որ ՀՀ ագրարային բարեփոխումների, մասնավորապես՝ հողի սեփականաշնորհման գաղափարի հիմնական առանցքը՝ մասնավոր սեփականության հիմքի վրա, բարձր տնտեսական շահագրգռվածության պայմաններում, արդյունավետ գյուղատնտեսական արտադրության զարգացումն էր: Սակայն ագրարային բարեփոխումները չամրապնդվեցին համապատասխան մակրոտնտեսական զարգացմամբ, արգելակներ ստեղծեց, այսպես կոչված, «գների մկրատը» (արտադրության միջոցների գները շատ ավելի արագ են աճում, քան գյուղատնտեսական ապրանքներինը), գյուղի արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների քայքայված վիճակը, ֆինանսական շուկայի դժվարամատչելիությունը, ոլորտի կառավարման համակարգի թերի լինելը, պետական աջակցության սահմանափակ հնարավորությունները և ֆինանսական միջոցների ոչ ռացիոնալ տեղաբաշխումը, ինչպես նաև բազմաթիվ այլ գործոններ: Պետք է նկատել, որ այս իրավիճակը հատուկ է հետխորհրդային տարածքի գրեթե բոլոր երկրներին: Սակայն, ի տարբերություն Հայաստանի, ԱՊՀ շատ երկրների աշխարհաքաղաքական դիրքը, տնտեսական ներուժը և տնտեսության առանձին ոլորտների հարաբերական առավելությունները մեղմացնում են գյուղատնտեսության ցածր արդյունավետությամբ պայմանավորված պարենային անվտանգության սպառնալիքները: Հայաստանում գյուղատնտեսության կայուն զարգացման բազմաթիվ գործոններից հատկապես կարևորվում են՝ մակրոտնտեսականը, ինտեգրված ոլորտների և գյուղական տարածքների հարմոնիկ զարգացումը, տնտեսական անվտանգության տեսանկյունից ոլորտների զարգացման գերակայությունների հստակեցումը և դրան համապատասխան պետական աջակցության երկարաժամկետ քաղաքականության իրականացումը: Այս տրամաբանությամբ ՀՀ-ում գյուղատնտեսության հողօգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք.

- ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գերակայությունը և ռազմավարական ծրագիրը ամրագրել համապատասխան օրենքով, որը հնարավորինս կբացառի բնագավառի հիմնախնդիրների լուծման նկատմամբ ոչ կայուն դրսևորումները:
- ՀՀ հողային օրենսգրքում և, համապատասխանաբար, այլ իրավական ակտերում ավելի հստակ և կոշտ պահանջներ ներկայացնել հողի սեփականատերերին գյուղատնտեսական հողերի նպատակային օգտագործման առումով: Այսօր գրեթե բոլոր գյուղական համայնքներում տեսանելի է «Շունը խոտի վրա» հանրահայտ ռուսական ասացվածքի տրամաբանությամբ հողօգտագործումը, այսինքն՝ ինքը չի օգտագործում, ուրիշին էլ թույլ չի տալիս դա անել: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, հողը դիտարկվում է որպես առանձնահատուկ արտադրության միջոց, որի արդյունավետ օգտագործումն ուղղակիորեն բխում է ամբողջ հասարակության շահերից, և, այդ առումով, կարող են կիրառվել սեփականության իրավունքի որոշակի սահմանափակումներ:
- Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման և հողերի միավորման պետական աջակցության նպատակային ծրագրի իրագործում, որի շրջանակներում պետք է շեշտադրվի գյուղական բնակավայրերում ոչ

գյուղատնտեսական զբաղվածության մեծացման, վարկային կոոպերացիայի խթանման, գյուղատնտեսական կադրերի ուսուցման և խորհրդատվության արդյունավետության բարձրացման խնդիրների լուծումը:

АШОТ МАРКОСЯН, САМВЕЛ АВЕТИСЯН, МАКАР ПЕТРОСЯН – ***Социологическая картина поведения граждан РА в отношении землепользования.-*** Экономический потенциал каждой страны определяется исходя из ряда параметров, среди которых главная роль отводится ресурсам и факторам производства. Организация производства товаров и услуг предполагает наличие природных, людских, капитальных и предпринимательских ресурсов.

Сельскохозяйственные земли в Республике Армения были приватизированы в самом начале экономических реформ. Предполагалось, что это для небогатой природными ресурсами страны частная собственность на землю может стать основным условием для формирования эффективных производств.

В рамках данного исследования авторы задались целью выявить насколько проявилась собственническая мотивация владельцев земли по истечении почти 20 лет и каким образом они предпочитают организовывать землепользование. С целью выявления предпочтений авторы провели социологическое исследование среди населения РА (в городах Ереван и Гюмри). В социологической выборке включены как собственники сельскохозяйственных земель, так и представители молодого поколения и научного потенциала республики.

Данная статья вкратце представляет полученные результаты и некоторые выводы авторов.

ASHOT MARKOSYAN, SAMVEL AVETISYAN, MAKAR PETROSYAN – ***Sociological canvas of the RA citizens' behavior concerning land using.-*** The economic potential of each country is determined by available economic resources and production factors. Organizing the production of goods and services supposes that you have sufficient natural, human, capital and entrepreneurial resources.

Agricultural land in the Republic of Armenia was privatized at the beginning of liberal economic reforms. We have assumed that for the country with scarce natural resources private ownership of agricultural land may become a necessary condition for creating effective production.

In the scope of the given research the authors have a goal to discover: which is the level of landowner's ownership motivation after about 20 years; and how landowners prefer to organize land tenure? The authors have carried out a sociological research among the RA citizens (particularly in Yerevan and Gjumri) through interviewing. The sociological sample includes land owners, representatives of young generation and scientific potential of the RA.

The article briefly presents the main results of the investigation and some suggestions of the authors.